ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
Протокол N 8

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
Заседания оценочной комиссии процедуры закупки под кодом EQ-BMAPDzB-21/6

Նիստի անցկացման՝
-վայրը՝Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 01.02.2021թ.
-ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սարգսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Գալստյանը, Է. Թարփոշյանը, Հ. Սարգսյանը, Հ. Մելքումյանը,
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

Место заседания: мерия г. Ереван (ул. Аргишти 1), комната 321
День, месяц, год заседания: 01.02.2021г.
Время заседания: 11:00ч.
Участвовали
Председатель комиссии Г. Саргсян
Члены комисии: Э. Галстян, Э. Тарпошян, А. Саргсян, А. Мелкумян
Секретарь комисии: Г. Мурадян

1. Հայտերի գնահատման մասին
Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին
Об оценках предоставленных заявок
Данные о наличии необходимых документов в каждом открытом приложении и их соответствие установленным требованиям

(Հ. Սարգսյան, Г. Саргсян)

1.1. Մասնակիցների կողմից ներկայացված և բացված հայտերուում պահանջվող փաստաթղթերը առկա են.

В поданной участниками открытой заявке имеются все необходимые документы:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:
Принято решение: за - 5, против - 0.

1.2 Գնահատող հանձնաժողովը մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում արձանագրել է հետևյալը.

1. ZHONGTONG BUS HOLDING CO LTD ընկերության հայտը՝ ներառյալ ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

2. **ՕԱՕ «ՄԱԶ»-ի** հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ՝ ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացված տեխնիկական բնութագրում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, մասնավորապես.
թափքը՝ տրամադրված տեխնիկական բնութագրում բացակայում է պատվիրատուի կողմից սահմանված ներկման էլեկտրոֆորիսային ձևը:
դիմապակի (հողմապակին) և պատուհաններ՝ ներկայացված տեխնիկական բնութագրում դիմապակին երեք կտորից բաղկացած չէ, ինչպես նաև բացակայում է ետևի ապակին՝ թրծված լինելու պատվիրատուի կողմից սահմանված պահանջը:
ուղևորասրահը՝ նշված տեխնիկական բնութագրում բացակայում է դեղատուփի և օդափոխվող լյուկի առկայությունը:
կախոցի համակարգը՝ պատվիրատուի կողմից սահմանվել է՝ առջևի անկախ կախոցները, սակայն ներկայացված առաջարկում առջեւի կախոցները ներկայացվել են որպես կախված:
անվադողերը՝ ներկայացված տեխնիկական բնութագրում անիվների չափսերը չեն համապատասխանում պատվիրատուի կողմից սահմանված չափսերին:
կառուցվածքային և տեխնիկական այլ չափորոշիչներ՝ ներկայացված տեխնիկական բնությագրում նշված ավտոբուսի չափսերը և թույլատրելի առավելագույն զանգվածը չեն համապատասխանում պատվիրատուի կողմից սահմանված պահանջներին:

3. **«Ռեգնում» ՍՊԸ-ի** հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ՝ ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացված տեխնիկական բնութագրում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, մասնավորապես.
թափքը՝ ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա է անհամապատասխանություն ավտոբուսի ներկման մասով: Ըստ ներկայացված տեխնիկական բնութագրի բացվածքի նշված է սովորական ներկում, իսկ պահանջվող տեխնիկական բնութագրով նշված է էլեկտրոֆորեզային ներկում:
ուղևորների նստացման դռներ՝ ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա է անհամապատասխանություն ուղևորների դռների մասով: Պահանջվող տեխնիկական բնութագրի դռները պետք է լինեն ամբողջությամբ ապակեպատ, որը ներկայացված տեխնիկական բնութագրևի բացվածքում նշված չէ:
կառուցվածքային և տեխնիկական այլ չափորոշիչներ՝ Ըստ ներկայացված մոդելի վերաբերյալ համացանցում առկա նկարներում ավտոբուսը ներկայացված է աստիճանային մուտքով, անհրաժեշտ է պարզաբանում և նկարներ առաջարկվող մոդելի ցածր մուտքի հավաստման համար:

По результатам оценки заявок участников оценочная комиссия зафиксировала следующее.

1. Заявка ZHONGTONG BUS HOLDING CO LTD, включая полное описание продукта, соответствует требованиям, изложенным в приглашении.

2. Заявка ОАО «МАЗ» в основном соответствует требованиям, изложенным в приглашении, за исключением некоторых несоответствий отмеченных в техническом описании товара которые не соответствуют требованиям заказчика, в частности.

кузов - на корпусе отсутствует краска для электрофореза, указанная заказчиком в предоставленном техническом описании.

лобавое стекло и окна - в представленном техническом описании лобовое стекло не состоит из трех частей а также отсутствует требование предусмотренное заказчиком на наличие закаленного заднего стекла .

пассажирский салон - в указанном техническом описании отсутствуют аптечка и вентилируемый люк.

подвеска – по требованию заказчика передняя подвеска определялась как независимая, но в предложении участника передняя подвеска зависимая,что не соответствует требаванию заказчика.

шины - в представленном техническом описании размеры колес не соответствуют размерам, определенным заказчиком

конструктивно-технические и иные требования – размеры автобуса указаные в представленном техническом описании и максимально допустимая масса не соответствует требованиям, предъявляемым заказчиком.

3. Заявка ООО «Регнум» в основном соответствует требованиям, изложенным в приглашении, за исключением некоторых несоответствий отмеченных в техническом описании товара которые не соответствуют требованиям заказчика, в частности.

кузов - есть неточность в технических характеристиках представленного автобуса. Согласно представленному техническому описанию указывается обычная окраска, а согласно требуемому техническому описанию - окраска электрофорезом.

пассажирские двери - в представленных технических характеристиках имеется несоответствие пассажирских дверей. Двери требуемые техническими условиями должны быть полностью остеклены, что не указано в технической характеристике дредоставленное участником.

конструктивно-технические иные требования – согласно представленной в интернете модели автобус представлен с пошаговым входом и по этму необходимы разъяснения и фотографии, подтверждающие низкий вход предлагаемой модели.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:
Принято решение: за - 5, против - 0.

1.3 Գնահատող հանձնաժողը հաշվի առնելով 1.2 կետով արձանագրված անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպմանն» Կարգի (այսուհետ՝ Կարգ) 41 կետով, որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 02.02.2021թ. շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Եթե սույն Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Принимая во внимание зарегистрированного в пункте 1.2 несоответствие к требованиям приглашения, оценочная коммисия руководствуясь пунктом 41 Порядка, утвержденного Постановлением Правительства РА N 526-N от 4 мая 2017 года, приняло решение о приостановлении заседания на один рабочий день и в электронном виде, уведомить об этом участников конкурса, предложив до истечения срока приостановки 02.02.2021. исправить зарегистрированные несоответствия. Если участник устраняет зарегистрированное несоответствие в срок указанный в пункте 41 настоящего порядка, его предложение считается удовлетворительным. В противном случае заявка участника будет признана неудовлетворительным и будет отклонена.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:
Принято решение: за - 5, против - 0.

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց շտկված փաստաթղթերի գնահատումն իրականացնելու նպատակով նիստ հրավիրել 2021 թվականի փետրվարի 3-ին ժամը 12:00-ին:

Оценочная комиссия для оценки доработанных документов решила созвать следующее заседание 3 февраля 2021 года в 12:00 часов.

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.
Имена и фамилии членов комиссии, присутствующих на заседании.

Հանձնաժողովի Комиссии		
Նախագահ՝ Председатель		Հ. Սարգսյան Г. Саргсян
Անդամներ՝ Члены		Է. Գալստյան Э. Галстян
		Է. Թարփոշյան Э. Тарпошян
		Հ. Սարգսյան А. Саргсян
		Հ. Մելքումյան А. Мелкумян
Քարտուղար՝ Секретарь		Գ. Մուրադյան Г. Мурадян